ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ

#StrongerTogether

2025թ. սեպտեմբեր

ԵՄ-ի եւ Հայաստանի միջեւ հարաբերությունները հիմնված են 2021 թվականի մարտից ուժի մեջ մտած Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) վրա:

ԵՄ-ն Հայաստանի առանցքային գործընկերն է եւ խոշորագույն դոնորը: 2024 թվականի փետրվարին ԵՄ-ն եւ Հայաստանը համաձայնվել են սկսել **նոր գործընկերության օրակարգի** ուղղությամբ աշխատանքները՝ ավելի հավակնոտ առաջնահերթություններ սահմանելով համագործակցության բոլոր ոլորտներում: Այս նոր օրակարգը հիմնված է 270 միլիոն եվրո արժողությամբ **Դիմակայունության եւ աճի ծրագրի** (2024-2027) վրա, որը կենտրոնացած է **երեք առաջնահերթությունների** շուրջ՝

- **Միակցվածությանը եւ բիզնեսին ուղղված ներդրումներ**
- **Հայաստանի եւ ԵՄ-ի միջեւ ավելի սերտ հարաբերություններ**
- **Հայ հասարակության դիմակայունության եւ ներառականության խթանում**

Վիզայի ազատականացման շուրջ երկխոսություն

Այս երկխոսությունը կուղղորդի բարեփոխումները կարեւորագույն ոլորտներում՝ ճանապարհորդական փաստաթղթերի անվտանգություն, սահմանային կառավարում, միգրացիա եւ ապաստանի տրամադրում, հասարակական կարգի պահպանում, արտաքին հարաբերություններ եւ հիմնարար իրավունքների հարցեր: Վիզաների ազատականացման գործողությունների ծրագրով սահմանված բոլոր պայմանները կատարելուն պես Հայաստանը կանցնի առանց վիզաների ռեժիմի՝ ԵՄ-ում կարճաժամկետ այցերի համար:

Մարդասիրական օգնություն

2023 թվականի սեպտեմբերին ավելի քան 115,000 հայերի տեղահանումից հետո ԵՄ-ն հատկացրեց ավելի քան 70 միլիոն եվրո՝ տեղահանված անձանց կարիքները հոգալու համար, այդ թվում՝ 21 միլիոն եվրո մարդասիրական օգնության եւ 40 միլիոն եվրո՝ բյուջետային աջակցության տեսքով՝ նրանց սոցիալ-տնտեսական ներառումը խթանելու նպատակով:

Հայաստանում ԵՄ քաղաքացիական առաքելություն

2023 թվականի փետրվարից ի վեր Հայաստանում՝ Ադրբեջանի հետ միջազգային սահմանի հայկական կողմում գործունեություն է ծավալում ԵՄ-ի անզեն քաղաքացիական առաքելությունը՝ անվտանգության իրավիճակը դիտարկելու եւ զեկուցելու, հակամարտությունից տուժած տարածքներում բնակիչների անվտանգությանը եւ վստահության ամրապնդմանը նպաստելու համար: Առաքելության մանդատը երկարաձգվել է մինչեւ 2027 թվականի փետրվար:

Քաղաքացիական հասարակություն

ԵՄ-ն հանձնառու է աջակցելու Հայաստանի քաղաքացիական հասարակությանը՝ կենտրոնանալով ժողովրդավարական կառավարման եւ քաղաքականության երկխոսության ամրապնդման վրա: Օգնությունը տրամադրվում է տարբեր նախագծերի, այդ թվում՝ կարողությունների զարգացման միջոցառումների միջոցով, եւ հիմնված է Հայաստանի քաղաքացիական հասարակության հետ համագործակցության ԵՄ 2021-2027թթ. ճանապարհային քարտեզի վրա: 2021 թվականից ի վեր ԵՄ-ն տարեկան ավելի քան 3 միլիոն եվրո է տրամադրել Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպություններին: 2025-2027թթ. ժամանակահատվածի համար հատկացվել է ավելի քան 9 միլիոն եվրո:

Տարածաշրջանային կայունություն

ԵՄ-ն աջակցում է Հարավային Կովկասի հետ ավելի սերտ համագործակցությանը եւ տարածաշրջանային գործակցությանը միակցվածության ոլորտում՝ Սեւծովյան տարածաշրջանի նկատմամբ իր ռազմավարական մոտեցման եւ հատուկ Միակցվածության ապահովման օրակարգի միջոցով: ԵՄ-ն շարունակում է հանձնառու լինել նպաստել Հարավային Կովկասի բարգավաճմանը եւ կայունությանը՝ ամրապնդելով կապերը տարածաշրջանում, մերձեցնելով տնտեսություններն ու մարդկանց:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՄ-ն զգալի աջակցություն է ցուցաբերում արդարադատության, ոստիկանության, կոռուպցիայի դեմ պայքարի եւ խտրականության դեմ պայքարի ոլորտներում առանցքային բարեփոխումների իրականացման համար, այդ թվում՝ բյուջետային աջակցության եւ տեխնիկական օժանդակության միջոցով: Ժողովրդավարական հաստատություններին աջակցությունը ցուցաբերվում է նաեւ տարածաշրջանային նախագծերի միջոցով, ինչպիսին է Եվրոպայի Խորհրդի հետ համատեղ իրականացվող «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագիրը:

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

2024 թվականին ԵՄ-ն աջակցել է 11,853 ՓՄՁ-ի եւ ֆինանսավորել 40 նախագիծ: Այս նախագծերը միասին ստեղծել են մոտ 27,313 նոր աշխատատեղ եւ նպաստել Հայաստանում ՓՄՁ-ների ընդհանուր շրջանառության զգալի՝ 17.2%-ով աճին:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ԵՄ-ն կրթության ոլորտին տրամադրում է 32 միլիոն եվրոյի բյուջետային աջակցություն եւ տեխնիկական օժանդակություն (2023-2025 թթ.)՝ կենտրոնանալով միջնակարգ կրթության եւ գյուղական վայրերում որակյալ կրթության հասանելիության բարելավման վրա: 2024 թվականին վերանորոգման աշխատանքներ են մեկնարկել առնվազն 7 դպրոցներում, Սյունիքի մարզի 117 դպրոցներում էլ ներդրվել են բազմատարիքային դասարաններ:

ԿԱՆԱՉ ԱՆՑՈՒՄ

ԵՄ-ն աջակցում է Հայաստանի կանաչ անցմանը: Մոտ 47 մանկապարտեզ եւ 6 պոլիկլինիկա վերանորոգվում են էներգաարդյունավետության ամենաժամանակակից չափանիշներին համապատասխան եւ օգտվում են վերականգնվող էկոլոգիապես մաքուր էներգիայի կայանքներից:

ԹՎԱՅՆԱՑՈՒՄ

EU-TUMO համալիրը հեղափոխում է հայ երիտասարդների թվային հմտությունների կրթության ոլորտը: Մինչ օրս ԹՈՒՄՈ լաբերի ուղղորդվող ինքնուսուցման ծրագրերն ունեցել են ավելի քան 7500 դիմորդ եւ ավելի քան 2000 ուսանող: ԹՈՒՄՈ լաբերն իրականացրել են 52 նախագիծ, կազմակերպել 3 ինկուբացիա՝ 18 շրջանավարտ թիմերով եւ աջակցել 4 ստարտափի գրանցմանը:

© Adobe Stock

«ԳԼՈԲԱԼ ԴԱՐՊԱՍՆԵՐԸ»՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

2021 թվականից ի վեր ԵՄ-ն իր «Գլոբալ դարպասներ» (Global Gateway) նախաձեռնության միջոցով ի թիվս այլնի աջակցում է ՓՄՁ-ների համար ֆինանսավորման մատչելիությանը, էներգաարդյունավետության լուծումներին, կրթական ենթակառուցվածքների վերականգնմանը եւ ջրային ռեսուրսների կառավարման բարելավմանը:

«Գլոբալ դարպասներ» ռազմավարության շրջանակներում սպասվող մոբիլիզացված ներդրումներն այժմ գերազանցում են 2.5 միլիարդ եվրոն, մասամբ՝ շնորհիվ միակցվածության ոլորտում խոշորածավալ նախագծերի ուղղությամբ առաջընթացի, ինչպիսիք են **«Հյուսիս-Հարավ» միջանցքի Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածը** կամ **Կովկասյան էլեկտրահաղորդման ցանցը**, որը միմյանց կկապի Հայաստանի եւ Վրաստանի էլեկտրական ցանցերը:

ՀՀ Սյունիքի մարզում ներդրումները եւս նպատակ ունեն բարելավել կրիտիկական ենթակառուցվածքները, ինչպիսիք են ջրամատակարարումը, առողջապահությունը եւ կրթական հաստատությունները, ինչի շնորհիվ **«Դիմակայուն Սյունիք Թիմ Եվրոպա» նախաձեռնության** ֆինանսավորման փաթեթը կհասցվի **200 միլիոն եվրոյի**:

«Դիմակայուն Սյունիք Թիմ Եվրոպա» նախաձեռնությունը, որը պաշտոնապես մեկնարկել է 2023 թվականի հունվարին, ԵՄ-ի, Եվրոպական ներդրումային բանկի, Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի եւ տասը ԵՄ անդամ պետությունների՝ Ավստրիայի, Չեխիայի, Էստոնիայի, Ֆինլանդիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Լիտվայի, Նիդեռլանդների, Լեհաստանի եւ Շվեդիայի, ինչպես նաեւ որպես արտաքին գործընկեր հանդես եկող Շվեյցարիայի համատեղ ձեռնարկումն է: Նախաձեռնությունը միավորում է ավելի քան 40 ընթացիկ նախագիծ, որոնք կենտրոնանում են սոցիալական եւ տնտեսական զարգացման, համայնքային ծառայությունների, տեղական ենթակառուցվածքների, ինչպես նաեւ շրջակա միջավայրի եւ էներգետիկ դիմակայունության վրա:

EaP | Eastern Partnership

Արտաքին գործողությունների եվրոպական ծառայություն՝
eeas.europa.eu/delegations/armenia | x.com/eu_eeas
Եվրոպական հանձնաժողով՝
ec.europa.eu/neighbourhood-enlargement/armenia | x.com/eu_enlargement_

© Եվրոպական միություն, 2025
Սույն փաստաթղթի վերօգտագործումը թույլատրվում է համապատասխան աղբյուրը եւ կատարված փոփոխությունները նշելու պայմանով (Creative Commons Attribution 4.0 International լիցենզիա): ԵՄ-ին չպատկանող նյութերի ցանկացած օգտագործման կամ վերարտադրության համար կարող է պահանջվել համապատասխան հեղինակային իրավունքի սեփականատիրոջ անմիջական թույլտվությունը: Բոլոր պատկերների հեղինակային իրավունքը պատկանում է Եվրոպական միությանը, եթե այլ բան նշված չէ: